

ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. հէտ տարվանը 6 ռուբլի. Առանձին համարները 5 կոպեկով.

Քիֆոսով գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, Редакція «Мшакъ». Կամ Tiflis, Rédaction «Mschak». Տ է Լ է Ք օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի եւ օտոս օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Յայտարարութիւններ համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ. Տ է Լ է Ք օ Ն № 253.

Հ Ի Մ Ն Ա Գ Ի Ր Գ Ի Կ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

Մարիամեան-Յովնանեան օրերգաց դպրոցի հիմնադիր

ՅՈՎՀԱՆՆԵՍ ՍՏԵՓԱՆՈՍԵԱՆ ՅՈՎՆԱՆԵԱՆԻ

Մահվան 16-րդ տարեդարձի օրը, կիրակի, ապրիլի 27-ին, Կուսանաց Անուպատի եկեղեցում կը լինի սուրբ պատարագ և հոգեհանգստեան պաշտաման կարգ կը կատարվի: Սուրբ պատարագի սկիզբն է 10 ժամին առաւօտը, որի մասին յայտնում է դպրոցի հոգաբարձական խորհուրդը: 1—1

Այրիացած տիրուհի Մարիամը իր որդի Բարդուղիմէոսին հետ ցաւօք օրտի յայտնում է բարեկամներին և ծանօթներին Մանգլիսի քահանայ

ՏԵՐ-ՅԱՎՈՎԲ ՄԵՅՐԱԲԵԱՆՅԻ

Մահը, որ տեղի ունեցաւ ամսին 22-ին Մանգլիսում Քաղաւքը կատարվելու է կիրակի, ամսին 27-ին, նոյն տեղում: 1—1

ԲՈՎԱՆԳՆՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—Ն.ՈՒՐԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Հին նորութիւն. Նամակ Մեծ-Ղարաքիլիսայից. Նամակ Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բաղադրի երկաթուղին և Անգլիան. Նամակ Պարսկաստանից. Սրտաքին լուրեր.—ՀԵՌԱՔԻՆԵՆԸ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՆԸ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Շարժէ-շարժ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անգլիական թագաւոր Երուսաղէմ VII-ի ճանապարհորդութիւնը վերջացաւ: Այդ ճանապարհորդութիւնը առիթ տուեց մի

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

Շ Ա Բ Է - Շ Ա Բ Ա Թ

Հայկական կեանքի տխուր իրականութեան մէջ թէև ուշ ուշ, բայց էլի տեղի են ունենում երևոյթներ, որոնք ընդունակ են ամենավատատես մարդին իսկ լաւ ապագայի յոյս ներշնչել:

Մի ինքնարական տրամադրութիւնները, ցրված պայտեղ և այնտեղ, երբեմն անաչոյզ պայմաններում ճնշած, բայց բարեբախտաբար ոչ մեռած, որպէս կենսունակ սերները հողի մէջ սպասում են միայն տաք արևին, և ահա մէկ էլ տեսնեն, նրանք ձեռքում են հողի վերին շերտը և հանում այնտեղից իրանք ճնշոյշ գլխիկները... այնուհետև նրանք առողջ զարգացումը գրեթէ ապահովված է...

Մեր այս խորհրդաւոր ենթադրութիւններին և սպասելիքներին մեծապէս նպաստեցին զատկական տօներէն առաջ և այդ տօներէ ընթացքում մեր հասարակական կեանքում տեղի ունեցած մի քանի փաստեր, որոնք արժանի են առանձին յիշատակութեան:

Ավանք հոգեբարեկաններից, այն իսկ պատճառով, որ զրանցով է սկսվում և վերջանում մեր ողջ կեանքը, սկսած մեր մկրտութեան խորհուրդից մինչև թաղման վերջին հանգիստը: Մօակվայի հայ գաղութը ունի ընդ ամենը երկու քահանայ, մի հին քահանայ և մէկ նոր քահանայ, այդ երկու քահանաները, որպէս վայել է միայն քահանաներին, ըստ հնաւանդ սրբագործված սովորութեան, իրանց ծանօթութեան և միաբանակցութեան հէնց առաջին օրից, սրտոյ և հաշտութեան սուրբ սեղանի առաջ, տուել են միմեանց անսխալեան մի երդում—երբեք չը հաշտվել և անողջ թշնամիներ լինել միմեանց... և ի պարծանս այդ երկու քահանաների, մինչև օրս նրանք հաւատարիմ են մնացել իրանց երդմանը... Սակայն մօտենում են 1903 թուր զատկական տօները: Մօակ-

կողմից Անգլիայի, իսկ միւս կողմից Պորտուգալիայի, Սպանիայի, Իտալիայի և Ֆրանսիայի քաղաքական շրջաններին և մամուլին՝ քննութեան առարկայ դարձնել Անգլիայի յարաբերութիւնները թէ՛ այդ և թէ՛ ուրիշ պետութիւնների հետ: Պորտուգալիան սերտ կերպով կապվեց Անգլիայի հետ. Իտալիան ցոյց տուեց մեծ համակրութիւն դէպի Անգլիայի հետ մերձեցման գաղափարը. Ֆրանսիան աշխատեց որքան կարելի է լինել սիրալիք և հիւրընկալ, առանց սակայն որևէ քաղաքական աչքի ընկնող հետեւանքներ: Հազիւ վերջացած էր անգլիական թագաւորի ճանապարհորդութիւնը, որ տեղի

վայի հայ համայնքը, վայելած լինելով իր երկու քահանաների թշնամական տրամադրութեան պտուղները, որոնք շատ էլ քաղցր չը պէտք է լինէին միջամտում է և թէև մեծ դժուարութեամբ, այնուհետև է հայտնեցնել դրանց, որով և 1903 թուր զատիկը դառնում է Մօակվայի հայ գաղութի համար կրկնակի զատիկ, որը և աւելում է լրագրութեան միջոցով համայն հայ ժողովրդին ի հրահանգութիւն...:

Նոյնանման հաշտութեան աւետիս զայիս է մեզ Արցախի մայրաքաղաքից—Շուշուց:

Հայտնվողները դարձեալ հոգեբարեկաններն են Փակագծի մէջ աւելորդ չեմ համարում յիշատակել, որ խոտմութեան ողբին մեր բոլոր տեղերի, բոլոր ժամանակներում, բոլոր հոգեւորականներին ընտրող յատկութիւնն է եղել խոտմարութեան տրամադրութիւնը մեր հոգեւոր հայրերի ձեռնադրութեան ժամանակ ընդունած բաղձաբառի շնորհներից ամենաառաջաւորն է եղել միշտ, իսկ դրան որպէս անբաժան ընկերներ հետևել են միւս առաջնութիւնները—օրինակ՝ ազատութիւն, նախանձ, արժաթ... սիրութիւն, կեղծաւորութիւն և այլն, որոնք այնուհետև ազիտութեան զօրաւոր հովանաւորութեան տակ ծխլ, ծաղկել և փարթում զարգացման են հասել... Շուշուում հաշտութեան գործը աւելի ծանր և բարդ պայմաններին մէջ էր, այն իսկ պատճառով, որ կուսակցութիւնը թէ՛ զիրքով և թէ՛ աստիճանով և՛ բարձր էին և՛ պատասխանատու. բաւական է ասել, որ զրանցից մէկը Շուշու թեմական դպրոցի տեսուչն էր—Բենիկի վարդապետը, միւսը նոյն թեմի սրբազան առաջնորդը. դրանց կոնքընական է, որ պէտք է և՛ լինէր աւելի գաղափարական իր հիմունքներով և՛ ողբալի իր հետեւանքներով. որովհետև այն-ինչ հայր տեսուչը այդ կուսի մէջ ղեկավարվում էր Բենիկի, Սպիտակայի, Կանախի, Նիշնի ցուցմունքներով սրբազան առաջնորդը աւետարանի, ազգայնի, վարդ-սրբոցի սկզբունքներով: Բայց լուսնի տակին անկարելի է լինել չը կայ. ժողովրդին յայտեղ ևս աչոյզվում է խաղաղարար հրեշտակի դերը կատարել Տեսուչը ուսուցչական

ունեցաւ մի ուրիշ պետի ճանապարհորդութիւն, այն է գերմանական կայսր Վիլհելմ II-ի հոգով: Գերմանիան և Իտալիան դաշնակից երկիրներ լինելով, նայեցին այդ ճանապարհորդութեան վրա իրեն մի նոր ապացոյցի, որ դաշնակցական յարաբերութիւնները ոչ մի կասկածի չեն ենթարկվել և նրանք ամուր են առաջվայ պէս:

Եւրոպական պետութիւնները ըստ երեւոյթին բոլորը միմեանց հետ բարեկամ են և ձգտում են ծագող թիւրիմացութիւնների առաջն առնել: Միակ բացառութիւնը, որ կայ այդ ընտանիքում դա Ֆրանսիան և Գերմանիան են կազմում, որոնք դեռ չեն մտադրել 1870 թւականը Մակայն Չինաստանի դէպքերի ժամանակ միաբան գործունէութիւնը, իսկ վերջին տարվայ մէջ այն գործակցութիւնը, որ հաստատվեց Գերմանիայի և Ֆրանսիայի մէջ Բաղադրի երկաթուղու հիմնութեան հարցում և մի քանի ուրիշ դէպքեր, ցոյց են տալիս, որ այդ երկու միմեանց թշնամի պետութիւնների մէջ ձգտում կայ մերձեցման անտեսական և ընդհանուր քաղաքական խնդիրներում:

Այն հետազոտողները, որոնք ստացվեցին վերջին շաբաթվայ ընթացքում Մակեդոնիայի և Ալբանիայի վարաբերութեամբ, անհանգիստ բնաւորութիւն էին կրում: Մայրենի քաղաքում և ուրիշ տեղերում ղեկավարի միջոցով աւերումներ կատարվեցին, մարդիկ սպանվեցին և առաջ եկան տեղական մի քանի շրջաններում իրարանցումներ: Ապստամբական խմբերը ցոյց տուին գործունէութիւն և ունեցան ընդհարումներ թիւրքական զօրքերի հետ:

Խմբագրութեան անհանգիստութեան անհանգիստութեան շնորհիւ վիճակված է մեր կենտրոնում կատարել մի բացառիկ դեր. մեր ոչ մի քաղաքը չը գիտէ աւելի լաւ գնահատել զրական և հասարակական գործիչներին որպէս նախնական, ի հարկէ... մենքնուց յիշատայ Սյո զարգան էր, որ կանգնեցրեց Պատմութիւնային և Նախնադեանի արձանները. այդ զարգան է, որ մարտի 23-ին մի չը տեսնված շուքով կատարել է հանգուցեալ Արամեանի մահվան տասնամակը: Միմիայն նոր-նոր զանազան կարող են խնամել Ֆոյնում և ուշիւ ուշով ու հետաքրքրութեամբ դիտել այն ցուցանանքները, որ կազմված է եղել Արամեանին նուէր բերված իրերից, որոնք հանված են եղել յատկապէս այդ օրվան համար... տեղական բանկից, ուր դրանք գրաւ էին գրված և ուր այդ իրերը նորից կը վերադառնան...:

Իրաւասանական ազգայնի դեմաւորութեան սրբաբան անմահ յուշարձան, սրբաբան քաղաքութեան... իսկ հայ հասարակութեանը դատ, որ այնուհետև փոխանակ չուտ թառամող ծաղկեայ փունջերի և ոչ մի իրական արժէք չունեցող գովասանական ուղեղների և ոտանաւորների նա իր տաղանդներին նուէր բերէ ոսկեայ գազօնկաներ, ժամացոյցի թանկագին շղթաներ, սակեայ, էմպլով զարդարած պօրտօրդարներ և այլ այնպիսի իրեր, որոնք մի կողմից բանկ գրվելով կարողանային փրկել հայ տաղանդին քաղցածութիւնից և կատարողական թղթերի ծանր հետեւանքներից, և միւս կողմից, բանկերից հանվելով՝ ծառայէին որպէս կենդանի ապացոյցներ տաղանդների հայկական գնահատութեան և նիւթեր յօբեղանական ցուցանանքներին... Այս բանի համար նոր-նոր

Հարց է ծագում. արդեօք փոխվել են քաղաքական հասարակները և արդեօք որևէ պատերազմական գործողութիւնների վտանգ կա՞ր:

Վճռական կերպով զուշակել ապագան ոչ զք չէ կարող. բայց որքան հարաւոր է իրերի ներկայ գրութիւնից մակաբերել ոչ մի էական փոփոխութիւն չէ կատարվել պետութիւնների հայեացքների մէջ Բաղադրի թերակողմ վերաբերութեամբ, և եւրոպական պատերազմական միջամտութեան տրամադրութիւն դեռ գոյութիւն չունի:

Առանձին նկատողութեան արժանի է այն հանգամանքը, որ պետութիւններից ոչ զք դիտաւորութիւն և ցանկութիւն չէ ցոյց տալիս օգտվելու ապստամբական շարժումներից. ոչ զք չէ խրախուսում այդ շարժումները, և ամենքը միախորհուրդ ղեկավարում են թիւրքաց կառավարութեանը, առաջարկելով նրան, որ նա իր սեփական զինուորական և վարչական ոյժերով խաղաղութիւն հաստատել երկրի մէջ և բարեկարգութիւններ մտցնել վարչութեան մէջ: Այդպիսով ապստամբական խմբերը թողված են իրանց բախտին և օգնութեան ոչ մի խոստում և յոյս չունեն ոչ մի տեղից: Նրանց դէմ կանգնած է թիւրքական կանոնաւոր զօրքի մի մեծ բազմութիւն, որ պարունակում է իր մէջ բաւոր մի լիճանի չափ զինուորներ իրանց պատրաստութիւններով:

Այսպէս է իրերի գրութիւնը:

Ղեկնի բանկը ամենայնպէս է. նա կողմած է այնուհետև հայ դերասաններին տուած ընձանների համար մուգնում դառնալու...:

Հիմքը գրված է Արամեանի նման տաղանդի ձեռքով...:

Մի նոյնանման մեծ գործ կատարում է, ինչ էք կարծում սր... մի յետ ընկած Ախալքալաքում...:

Գիւղաստեանական կարիքների գործեան հանգոյցը լուծված է, և լուծված է ամենանեղ կերպով, առանց նախնազական, զաւառական մասնաժողովների, առանց ձեռնհաս աւտօրիտետների, և լուծված է... մի հայ վարդապետի շնորհիւ, և Ֆրանսական մի այնպիսի ճարտիկ և հանձնարեղ կանանկով, որ մնում է միայն զարմանալ և հիանալ... Բայց յիշե՛ք Կորնթոսի ձուռն. այդպէս է բոլոր ծանր և բարդ պրոբլեմների վախճանը:

Փաստեր կուզէ՞ք, ա՛նա:

Ախալքալաքի փոխանորդ Բարկէն վարդապետը Ախալքալաքում ժողով է գումարում... Բխոտանում է ազատել կորուստից գաւառի բոլոր եկեղեցապատկան գումարները, որոնք կուլ են գնում գլխաւորապէս վախճանու երեսփոխների և նրանց ազգականների (?) գրպաններում, և թոյլտուութիւն խնդրել՝ եկեղեցապատկան գումարները որոշ չափով գործադրել գիւղաստեանական գործիքներ ձեռք բերելու և այլն... Թղթակիցը աւելացնում է, որ ընդհայ եղողները հաւանութիւն տուեցին այդ առաջարկին:

Փաստը այնքան ընտրոյ է, այնքան սիրեան լիսու և այնպիսի նեղիմաստ արդիւրից է ըլլում, որ բացարձակութիւններ աւելորդ են... Ահա թէ ինչպէս կարելի է մէկ քարով երկու նապաստակ վար գցել—ազատել կորուստից եկեղեցապատկան, այս և այն մարդկանց գրպաններում հանգիստ ջնած գումարներ և... զարկ տալ երկրի գիւղաստեանական առաջադիմութեանը...:

Կարող էինք այս 1903 թուր զատկից այսքան բեղմնաւոր և մի ինքնարական բաներ ուզանք... Ստորագրել է

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հին ՆՈՐՈՒԹԻՒՆ

Հիւանդութեանս պատճառով անկողին մտնելու ինձ հնարաւորութիւն տուող մի առ ժամանակ կարծիք առօրեայ հոգեւորից և պարտականութիւնից, որով և հնարաւորութիւն ունեցայ ծանօթանալ վերջին ժամանակ լոյս տեսած մեր նոր հրատարակութիւններին հետ: Արժողունու կենսագրութեան առաջին հատորը առաջի վերջապատ գիրքս էր: Ուշի ուշով դիտելով մեր սիրելի ուսուցչի գրական նախաձեռնութիւնը, ապա՝ նրա գրական գործունէութեան ընդհանրապէս առաջին շրջանը՝ ես ակամայից կարգ առայ մի հարցի առջև, որը ամենից շատ զբաղեցրեց ինձ. դա կնոջ ազատագրութեան հարցն էր, որին Արժողունին դեռ պատանկեութեան շրջանում ամբողջ կրակոտ յորձանքներ է նուիրել:

Առում եմ, այդ հարցի առջև ես կանգ առայ, բայց ոչ թէ նրա համար, որ ինձ էլ է նա մի ժամանակ զբաղեցրել, և ոչ էլ նրա համար, որ այժմ կանանց խնդրով զբաղվելը մտային մի բան է դարձել: Ո՛չ, ես միայն կանգ առայ, որովհետեւ այդ խնդրով Արժողունու գրական գործունէութեան առաջին շրջանում իսկ կարմիր թելի նման մի անշնչելի և այն ժամանակվայ մեր ժողովրդի ընդհանուր ազիտութիւնը, ով զգում է այն ժամանակվայ մեզ շրջապատող խաւարի թանձրութիւնը, ճնշող, խեղդող ծանրութիւնը՝ նա հեշտ կերակույցէ այդ անմխիթար կեցութեան մէջ կնոջ դրութիւնը:

Ահա, ի նկատի ունենալով այս բոլորը, դժուար չէ երևակայել, թէ Արժողունին սրտի ինչպիսի կոկիտով էր գրում հայկական տգիտութեան և անտարբերութեան մասին. դժուար չէ պատկերացնել, թէ նա հոգեկան ինչպիսի տանջանքներ էր ենթակայ՝ հայ կանանց մասին գրելիս, երբ ասում էր. «Երբ ինչու եմ գրում այս տողերը, քանի որ հաւատացած եմ, որ չը պիտի գտնուի մի օրիորդ, որ կարգաւ կարողանայ այս տողերը: Ինչպէս գիտե՞ք մի օրիորդ, Շուշանիկ անունով, բողոքեց այդ տողերի դէմ, առելով, որ հայերէն կարգացող օրիորդներ շատ կան, բայց հայերէն կարգաւոր բան չը կայ:

Երբ մտքը յիշողութեան մի թռիչքով ընդգրկում է 3-4 տասնեակ տարիների մեր մտաւոր կեանքի պատմութիւնը, նա ազդում և սարսափում է այն դերից, որը վերջին ժամանակներս իր վրա է վերցրել հայ կինը:

Նոյն Արժողունին կեանքի մէջ մտնելուց յետոյ, նրա հետ և ուրիշ շատ հասարակական գործիչներ, երկար ժամանակ կատարել և լուսահատական կուռ էին մղում, մինչև որ նրանց աջողակ կտորել մեր կեանքի դարասր շրջանները՝ հայ կնոջը, հայ աղվանը նահապետական կեանքի խեղդող ճիւղերից ազատելու համար: Հայ աղվան համար բացվելին դարձողի զենքերը՝ այնպէս աշակերտելու համար, ապա՝ դաստիարակելու համար Փոքր ինչ փրկութիւն թագիւն, բայց թոյլ տեսելին մեր բարի, հին ծնողները նրանց և բեմ դուրս գալ և ուրիշ հասարակական գործերում մասնակցութիւն ունենալ: Կնոջ ընտանեկան ազատութեան գործը սկսվել է և առանց կանգնելու շարունակվում էր...

Հեշտ չէր այդ բանը իրագործելը... հարկաւոր եղաւ զինել պարբերական մամուլը նոյն կուռ համար. հարկաւոր եղաւ մեր վիպական գրականութեան ընթացքը թեքել դէպի այդ կողմը, զոհեր տալ թէ կուտղների կողմից և թէ նրանց, որոնց համար կուռում էին:

Վաղուց է, որ հայ աղվանը այլ ևս անկիւն-հրաւէրը կամ խանութ գնալու համար... նա ապամ իր ժամանակի ազատ տէրը և տնօրէնն է:

Բայց ինչպէս նա իր շնորհակալութիւնը յայտնեց իր ստացած այդքան արտօնութիւնների համար. ո՞րքան նա երախտագարտ եղաւ այն բոլորի համար, ինչ որ տեսելին իրան այնքան կուռով՝ գաւով:

Ծաւ է ասել, շատ կարճ ժամանակ միայն նա իրան պարտաւոր համարեց իր պարտքը վճարել, և շատ քիչ ջանքեր գործարեց իր վայելած ազատութիւնը օգտուէտ ու արդիւնաւէտ դարձնելու իր և իր շրջապատողների համար: Այդ կարճ ժամանակամիջոցը իր ժամանակին գոհունակութեամբ և հրճուանքով յիշում և արձանագրում էր մեր մամուլի թունալից օղբ չնչելուց. հարկաւոր են միջոցներ էջերում. ոչ մի քայլ, ոչ մի շարժում չէ վրէժնեցողների թիւը ստուարացնելու. գիրքը:

պէր Բայց այն, ինչ արեց հայ կինը իր ազատութեան առաջի շրջանում՝ նա պիտի լինէր միւրայն առաջարկ իր իսկական անխիղճ Այդ իսկական անխիղճ իսկի հրատարակ չնկաւ. կարճատև մաքուր ոգևորութիւնից յետոյ, հայ կինը, կարծելով որ իրան տուած ազատութեամբ նա հասաւ քաղաքակրթութեան պահանջների գագաթնակէտին, զարգացեց հասարակական տարր լինելուց և դարձաւ մի նեղ, չափափակ, անձնական հաճոյքների սիրահար, կապալաշտ տարր: Իրան տուած ազատութիւնը նա սկսեց ի չար գործ դնել շատ մեծ և անվայել չափերով. նրան նուիրած ազատ ժամանակը նա գործարեց պղծանքներ և շտապանքներ ընդօրինակելու. նա մոռացաւ, որ իր ազատագրութեան խնդիրը դեռ վերջացած չէ, որ նա դեռ նոր է սկսուած, հետևապէս անխիղճ պայտեզութեամբ սկսած բարի գործը: Նա սկսեց քանդել և ընտանիքի հիմքը, այն ընտանիքի, որով տեղի թէ անտեղի, ժամանակ թէ անժամանակ պարծնում էր հայր Այծի հայ երիտասարդներից շատերը հայ օրիորդներից վախճում են: Նա կը քանդէ մեզ, ասում է հայ երիտասարդը. գոյութեան կուռի խնդիրը դժուարացել է, իսկ հայ կնոջ ընտանիք քանդելու, աւերելու զէնքերը՝ շատացել, կատարելագործվել: Մենք չը գիտե՞ք, ասում էին ինձ մի քանի երիտասարդներ, որոնք խնդրում էին ինձ անպատճառ այդ բանի մասին գրել: թէ մեր այդ «զարգացած» օրիորդները, մեր ամուսինները դառնալով, ինչ լեզու պիտի սովորեցնեն իրանց զաւակներին. մայրենի լեզուն նրանք վաղուց են սկսել ասել և մոռացել են, իսկ իւրացրած օտար լեզուն մի կարգին էլ չը գիտեն:

Այսպէս է ահա իրերի դրութիւնը այժմ. հայ կնոջ այդպիսի աննրբելի անհոգութիւնը, անտարբերութիւնը, այդպիսի, թող ներքի ասել, անասութիւնը քիչ քիչ վախճում էր վաղուց և արձանագրված մեր կեանքի իրողութեան մէջ. մեր մամուլի էջերում Բայց հայ օրիորդը ցոյց տուեց զէթ 40 տարի արանքի առջև գոյութիւն ունեցող օրիորդ Շուշանիկի ինքնասիրութիւնը, հրատարակ եկաւ զէթ մէկը մեր այժմեան բազմութիւն (համեմատած այն ժամանակվայ կնոջ) «Երբ ինչու» օրիորդներից հրատարակվաւ աշտպանելու իրանց դասակարգը՝ «Երբ գոյութիւն ունեցող օրիորդները և իր անդեմ ուղղած նախատինքը: Եւ ինչ ասեն. չէ որ կամ արդէն եկել է կամ շատ մօտ է այն ժամանակը, երբ էլ չի գտնուի մի հայ կին (ոչ բառացի մտքով), որը նախկին կարգով իմանք, այսինքն փաստը, որ մեր հայ կանայք յետ են դառնում դէպի 60-70-ական թւականները, անհրաժեշտ է...»

Արժէր, ընթերցող, քամուս տալ այս միջոց հին նորութիւնը: Անկասկած, արժէր, հէնց այժմ, երբ մենք առիթ ունենք ծանօթանալու հայ կնոջ ազատագրութեան պատմութեան ծագման և նրա անձամբ հերթը: Արժողունու հետ, արժէ յիշեցնել մեծ զօրապետի նշխարներին, թէ ինչպէս իրան զինուորները, իրանց յատակ փորձողութեամբ և մտաւայելութեամբ կորստեան են դիմում: Այդ մասին չի դերը կատարող թող ես լինեմ, բայց և թող արձանագրված լինի իրողութիւնը. ազատ հրատարակութիւնը կհաստատուէր տեղեր ունենալ չէ սիրում:

Ռ. Յովհաննիսեան

ՆԱՄԱԿ ՄԵՆՉԱՐԱՔԻԼԻՍԱՅԻՑ

Ապրիլի 21-ին Վաղուց է, որ մեզ զբաղեցնում է հասարակական գրադարան-ընթերցարանի հարցը, և այնքան զգալի է դարձել այդ օգտուէտ հիմնարկութեան հաստատութիւնը մեզանում, որ նոյն-իսկ եկեղեցու բեմից մեր հոգեւորականութիւնը կարող է համարում հրաւէր կարգաւ զայ ժողովրդին նրա անհրաժեշտութեան մասին: Ահա թէ ի միջի այլոց ինչ էր ասում Թորէն քահանան մեծ պատին իր քարոզչներից միում. «Գրագէտների թիւը մեզանում նշանաւոր տոկոս է կազմում, իսկ ընթերցողների թիւը՝ աննշան. դա շատ անմխիթար դրութիւն է. միթէ 40 տարի դարձող ունեցանք միւս միայն նրա համար, որ մեր երիտասարդ սեւրուսը գինեւանութեամբ, այդ անբարոյական որջերում, ընդհանր գրելով պարտապի և պատասխան կայարանների ապակեմակում, մըլած օղում պարզօնի կլիտանցիաները Հարկաւոր են միջոց մխիթար գրութիւնից, իրելի նրան գինեւանների ընթերցողների թիւը ստուարացնելու. գիրքը:

ըրգիրը, ընթերցանութիւնը, ինքնակրթութիւնը անապին դեր են կատարում մարդկային կեանքում, ահագին նշանակութիւն ունեն մըտաւոր և բարոյական առաջադիմութեան գործում: Գրագարան-ընթերցարանը անհրաժեշտ է մեզ. անհրաժեշտ է այդ օգտակար հիմնարկութիւնը, կամենալով նպաստել եւրօպական նոր լեզուներին՝ ֆրանսերէնին, գերմաներէնի և անգլերէնին՝ առաջադիմութեան գործին միջնակարգ դպրոցներում, առաջարկել է ուսումնական նարանակային շրջանների հոգաբարձուներին կարգադրել, որ աշակերտները պարտապէս այդ լեզուներով նաև այն ժամանակ, երբ ազատ են միւս դասերից: Պարապմունքները այդ ազատ ժամերին չը պէտք է լինեն պարտաւորական, այլ կամաւոր. չը պէտք է գործածվեն դասագրքեր կամ այլ գրուած աշխատանքներ. դասատու ուսուցիչը պէտք է աշխատի զբաղեցնել աշակերտներին նոր լեզուների գործնական ուսումնասիրութեամբ՝ խօսակցելով նրանց հետ կարգացած զանազան գրքերի բովանդակութեան մասին: Նոր լեզուների այս կամաւոր պարապմունքները կը մտցնվեն միջնակարգ դպրոցներում 1903-04 ուսումնական տարվայ սկզբից: Նրանց կը մասնակցեն բարձր դասարանների աշակերտները՝ սկսած 4-րդ դասարանի աշակերտներից, իւրաքանչիւր աշակերտ, իւր և վարձատրութիւն պարապող ուսուցչին, կը վճարէ նրան 20 կօպէկ իւրաքանչիւր ժամի համար:

Ստացանք բժշկապետ Տիգրան Գէորգէականի «Результаты оперативнаго лѣченія содружественныхъ косоглазія» դիտարկութեան, որ պաշտպանել է պ. Գէորգէական Պետերբուրգի զինուորական-բժշկական Ակադեմիայում անցեալ տարվայ վերջերում Բժշկապետ Գէորգէական աչքերի հիւանդութիւնների մասնագէտ և հաստատուել է Թիֆլիսում:

Իերասանուհի Եւօլոյսկայեա, հինգըսթի, ապրիլի 24-ին, հանդէս եկաւ Բօստանի «Արժողուն» պիեսի մէջ Պրանսուայի դերում: Իերասանուհին պատանի տղամարդի դերում շատ աջող էր, և նրան չէր խանգարում նրա թանձրանչու ձայնը: Շարժմունքները, աշխույժ, ոգևորված խօսքերը, պատանեկան բուռն յուզմունքները, բողոքի և ցասման արտայայտութիւնը դարձրին Պրանսուայի տիպը բնորոշ և գրաւիչ: Թատրոնը լիքն էր:

Վիլյայի ուսումնասիրական շրջանի հոգաբարձու Պօպօլ հարց է առաջարկել Մօզիելի քաղաքի դուստրին, թէ չի նուիրել արդեօք դուստան 60 դեռեանտին հող քաղաքային կուրսանքներից համալսարանի շինութեան և նրա այլ կարիքների համար: Այս առաջարկութիւնը տեղի է ունեցել այն պատճառով, որ կառավարչական բարձր շրջաններում քննվում է այժմ Բուստանի հիւսիս-արևմտեան մասում մի նոր համալսարան բանալու հարցը: Վիլյայի ուսումնասիրական շրջանի հոգաբարձու գրաւում է, որ ամենայնամայր տեղը այդ համալսարանի համար կը լինի Մօզիելի քաղաքը:

Հողերի սահմանորոշական աշխատանքները Երևանի նահանգում արդէն վերջացած են: Այդ աշխատանքներից ստացված նիւթերը այժմ մշակվում են Անդրկովկասեան վիճակագրական կոմիտէտում և կը հրատարակվեն այս տարվայ ընթացքում:

Ձորքայքի, ապրիլի 23-ին, «Թիֆլիսի կրօտօկի» դահլիճում տեղի ունեցաւ դրամատիական երեկոյ բնարձարգոյն դպրոցներում ուսանող երիտասարդների նպաստելու կովկասեան ընկերութեան» օգտին: Երեկոյին մասնակցեցին տիկին Եւօլոյսկայեա և նրա խմբի անդամները: Կրօտօկի դահլիճը ամբողջապէս լցված էր հասարակութեամբ:

Ժողովրդական լուսաւորութեան միջնարկութիւնը բացատրեց, որ օտարապատակ տնային ուսուցչուհիներն ու վարժուհիները, որոնք ուսուցչուհու կամ վերակարգուհու պայտան են վարում իրական զինազինանքում, իրաւունք ունեն օգտվելու պետական ծառայութեան այն արտօնութիւններով, որով օգտվում են ուսուսակատանքները:

Պետերբուրգի հիմնարկութեան 200-ամեայ յօբելեանի հանդէսները որոշված է սկսել մայիսի 16-ից: Մայիսի 13-ից սկսած ուսումը կը դադարեցնուի Պետերբուրգի բոլոր ուսումնական հաստատութիւններին մէջ:

Ժողովրդական լուսաւորութեան միջնարկութիւնը, կամենալով նպաստել եւրօպական նոր լեզուներին՝ ֆրանսերէնին, գերմաներէնի և անգլերէնին՝ առաջադիմութեան գործին միջնակարգ դպրոցներում, առաջարկել է ուսումնական նարանակային շրջանների հոգաբարձուներին կարգադրել, որ աշակերտները պարտապէս այդ լեզուներով նաև այն ժամանակ, երբ ազատ են միւս դասերից: Պարապմունքները այդ ազատ ժամերին չը պէտք է լինեն պարտաւորական, այլ կամաւոր. չը պէտք է գործածվեն դասագրքեր կամ այլ գրուած աշխատանքներ. դասատու ուսուցչի պէտք է աշխատի զբաղեցնել աշակերտներին նոր լեզուների գործնական ուսումնասիրութեամբ՝ խօսակցելով նրանց հետ կարգացած զանազան գրքերի բովանդակութեան մասին: Նոր լեզուների այս կամաւոր պարապմունքները կը մտցնվեն միջնակարգ դպրոցներում 1903-04 ուսումնական տարվայ սկզբից: Նրանց կը մասնակցեն բարձր դասարանների աշակերտները՝ սկսած 4-րդ դասարանի աշակերտներից, իւրաքանչիւր աշակերտ, իւր և վարձատրութիւն պարապող ուսուցչին, կը վճարէ նրան 20 կօպէկ իւրաքանչիւր ժամի համար:

Ստացանք բժշկապետ Տիգրան Գէորգէականի «Результаты оперативнаго лѣченія содружественныхъ косоглазія» դիտարկութեան, որ պաշտպանել է պ. Գէորգէական Պետերբուրգի զինուորական-բժշկական Ակադեմիայում անցեալ տարվայ վերջերում Բժշկապետ Գէորգէական աչքերի հիւանդութիւնների մասնագէտ և հաստատուել է Թիֆլիսում:

Իերասանուհի Եւօլոյսկայեա, հինգըսթի, ապրիլի 24-ին, հանդէս եկաւ Բօստանի «Արժողուն» պիեսի մէջ Պրանսուայի դերում: Իերասանուհին պատանի տղամարդի դերում շատ աջող էր, և նրան չէր խանգարում նրա թանձրանչու ձայնը: Շարժմունքները, աշխույժ, ոգևորված խօսքերը, պատանեկան բուռն յուզմունքները, բողոքի և ցասման արտայայտութիւնը դարձրին Պրանսուայի տիպը բնորոշ և գրաւիչ: Թատրոնը լիքն էր:

Վիլյայի ուսումնասիրական շրջանի հոգաբարձու Պօպօլ հարց է առաջարկել Մօզիելի քաղաքի դուստրին, թէ չի նուիրել արդեօք դուստան 60 դեռեանտին հող քաղաքային կուրսանքներից համալսարանի շինութեան և նրա այլ կարիքների համար: Այս առաջարկութիւնը տեղի է ունեցել այն պատճառով, որ կառավարչական բարձր շրջաններում քննվում է այժմ Բուստանի հիւսիս-արևմտեան մասում մի նոր համալսարան բանալու հարցը: Վիլյայի ուսումնասիրական շրջանի հոգաբարձու գրաւում է, որ ամենայնամայր տեղը այդ համալսարանի համար կը լինի Մօզիելի քաղաքը:

Հողերի սահմանորոշական աշխատանքները Երևանի նահանգում արդէն վերջացած են: Այդ աշխատանքներից ստացված նիւթերը այժմ մշակվում են Անդրկովկասեան վիճակագրական կոմիտէտում և կը հրատարակվեն այս տարվայ ընթացքում:

Ձորքայքի, ապրիլի 23-ին, «Թիֆլիսի կրօտօկի» դահլիճում տեղի ունեցաւ դրամատիական երեկոյ բնարձարգոյն դպրոցներում ուսանող երիտասարդների նպաստելու կովկասեան ընկերութեան» օգտին: Երեկոյին մասնակցեցին տիկին Եւօլոյսկայեա և նրա խմբի անդամները: Կրօտօկի դահլիճը ամբողջապէս լցված էր հասարակութեամբ:

Ժողովրդական լուսաւորութեան միջնարկութիւնը բացատրեց, որ օտարապատակ տնային ուսուցչուհիներն ու վարժուհիները, որոնք ուսուցչուհու կամ վերակարգուհու պայտան են վարում իրական զինազինանքում, իրաւունք ունեն օգտվելու պետական ծառայութեան այն արտօնութիւններով, որով օգտվում են ուսուսակատանքները:

ՆԱՄԱԿ ԽՄԱՆՈՒԹԵԱՆ

Պիֆլիս, ապրիլի 24-ին Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանցը, համակրելով «Պատմագիրը կայոց» հրատարակութեան սիրայօժար կերպով յանձնու էր եղել հոգալ այս հրատարակութեան տալիս հատորի ծախսը, յատկապէս լրջ սրա համար 5-6,000 ռուբլի:

Ի լրումն այս խոստման, Սուքիաս արքեպիսկոպոս օրերս իմ անունով փոխարեց 3196 ռ. 11 կօպէկ, իբրև մի մասն Ա. հատորի տպագրութեան ծախսերի, ինչպէս նախապէս պայմանաւորել էր:

Պարտք եմ համարում, հրատարակչ-ընկերակիցներին, Հ. Գարեգին վարդապետ Եւօլոյսկայեանի և Միքայիլ Մարտիկ Տէր-Մկրտչեանի, և իմ կողմից, խորին շնորհակալութիւն յայտնել Սուքիաս արքեպիսկոպոս այս նուիրատուութեան համար, որ ոչ միայն ապահովում է Պատմագիրը առաջին հատորի ապագայութիւնը, այլ և իբրև լուրջ գրաւական է ծառայում ամբողջ հրատարակութեան աջողութեանը:

Ստ. Մալխասեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեկոյն եմ համարում, հրատարակչ-ընկերակիցներին, Հ. Գարեգին վարդապետ Եւօլոյսկայեանի և Միքայիլ Մարտիկ Տէր-Մկրտչեանի, և իմ կողմից, խորին շնորհակալութիւն յայտնել Սուքիաս արքեպիսկոպոս այս նուիրատուութեան համար, որ ոչ միայն ապահովում է Պատմագիրը առաջին հատորի ապագայութիւնը, այլ և իբրև լուրջ գրաւական է ծառայում ամբողջ հրատարակութեան աջողութեանը:

Ստ. Մալխասեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երեկոյն եմ համարում, հրատարակչ-ընկերակիցներին, Հ. Գարեգին վարդապետ Եւօլոյսկայեանի և Միքայիլ Մարտիկ Տէր-Մկրտչեանի, և իմ կողմից, խորին շնորհակալութիւն յայտնել Սուքիաս արքեպիսկոպոս այս նուիրատուութեան համար, որ ոչ միայն ապահովում է Պատմագիրը առաջին հատորի ապագայութիւնը, այլ և իբրև լուրջ գրաւական է ծառայում ամբողջ հրատարակութեան աջողութեանը:

Ստ. Մալխասեանց

Ռուսաց արդիւնաբերութեան և առևտրին նպաստող ընկերութեան մէջ հարց է բարձրացրած հրատարակելու մի այնպիսի մատչելի գիրք ժողովրդի համար, որի մէջ բացատրված լինեն կոօպերացիայի բոլոր տեսակները, գաւազան կոօպերատիվ հիմնարկութիւններին անասնաբուծութեան, նրանց կազմելու միջոցները և գործադրութեան եղանակը նրանց մէջ: Մտադրութիւն կայ գրքը, հրատարակելուց յետոյ, ուղարկել ձրաբար բոլոր գէտափնտրիչներին և դպրոցական գրադարաններին:

ՆՈՐ-ԱՍՅԱՉԵՏԻՑ մեզ գրում են. «Տեղիս գործակալ Սորէն վարդապետ Մուրադէզեան ստացել է բժշկական Վ. Արծրունուց 700 օտաններով «Բժշկի գրոցներ» գրքոյնից, որպէսզի այդ գրքոյնները վաճառվեն տեղիս նորակառոյց ու Աստուածածին եկեղեցու օգտին: Բացի և եկեղեցուն ներկայումս օգնելուց, յարգելի բժշկապետը նաև մեծ օգնութիւն ունի հասցրած այն տեսակէտից, որ իր հայրենիքի, Նոր-Բայազետի, ընտանեկան հնարաւորութիւն ունի 48 կօպէկով ձեռք բերել 7 գրքոյններ, լի բժշկական խորհուրդներով, մասնաւոր որ տեղը չը կայ ոչ բժիշկ, ոչ էլ դեղատուն: Յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը պ. Արծրունու, որ չէ մոռացել իր որդիների չափ օգնել իր հայրենակիցներին»:

Փի՛ն գիւղից (Գանձակի գաւառ) մեզ գրում են. «Մի քանի օր առաջ տանուէրի օգնական Լ. և Ա. մի ջնջին ըստի համար սկսում են վիճել շուտով վէճը հասնում է կոտի. Ա. հանում է դանակը և արսափելի վէճը է հասցնում իր հակառակորդի կրծքին: Վիրաւորվածը անմիջապէս ընկնում է, առում են վէճը մահացու է: Չարաբործը բռնված է: Առկասարակ վերջին տարիներս մեզանում սպանութիւններ սկսել են յաճախ կրկնվել»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՂՂԱԴԻ ԵՐԿԱՌՈՂԻՆ ԵՒ ԱՆԳԻԱՆ

Վերջին տարիներս խաղաղ նուաճումներ են անում գերմանացիները. նուաճումներ՝ առանց զէնք ու զրաշի, առանց արևելահեղ պատերազմների: Չուստ անտեսական նուաճումներ են դարձնում, որ նորանոր վաճառանոցներ են պատրաստում գերմանական արդիւնաբերութեան համար: Դրանց շարքում ամենազինավոր տեղը բռնում է Բաղղադի երկաթուղին, որը դեռ այնքան ատառ նիւթ է մատակարարում եւրօպական մասուլին, դեռ զբաղեցնում է դիպլոմատիային:

Նրա մասին խօսում ու գրում են իրանը գերմանացիները. գրում են ոտանները, անգլիացիները, ֆրանսիացիները: «Մի խօսքով այն բոլոր ազգերը, որոնք մեծ կամ փոքր չափով չանհանգրված են այդ հարցում»:

Բաղղադի երկաթուղին, ձեռքբերված Փոքր-Ասիայի և Միջագետքի պտղատու դաշտերը, հարուստ լեռներն ու ձորերը, պէտք է կուլտուրական մի նոր հոսանք մտցնել այդտեղ, պէտք է անտեսական կատարելով յեղափոխութեան ենթարկել այդ ընդարձակ երկիրը, որը մինչև օրս գրեթէ ազատ էր եւրօպական ազդեցութիւնից, ազատ էր միջազգային մրցման հետքերից:

Եւ այդ հակապական ձեռնարկութիւնը ծառայելու է գրեթէ միմիայն գերմանական շահերին, նա քայլեր-տանելու է գերմանական ապրանքները դէպի այդ հեռուոր վայրերը, չափաւէտ ասպարէզ է բաց անելու գերմանական կապիտալների համար, մի խօսքով նա մի խոշոր զէնք է դառնալու գերմանական կապիտալի մեծ ձեռքում:

Իսկ միւս մեծ պետութիւնները նրանք ուշի ուշով հետևում են այդ երկայնի, նախանձով նայում են ձարպիկ «Միլիտարիստ» երկրներ և յարմար առիթի են սպասում, որ կամ անձնաշարեն նրա ձգտումը, կամ արգելափակ մի պատաս էլ իրանց կողմը քաշեն:

Եւ հնա ներկայանում է այդ առիթը: Երկաթուղու շինութեան համար անհրաժեշտ են անագին գումարներ, որ վեր են գերմանական ոյժերից: Գերմանացիները օգնութեան են կանչում ու բրիտանացիներին, հաստատ հաւատացած լինելով, որ օտարների մասնակցութիւնը երբէք չէ կարող քանգել արդէն ընդգծած ձրադիրը, չէ կարող մազաչափ վնաս հասցնել շահերին: Մասնակցելու համաձայնութիւն են տուել ֆրանսիացիները, իրանց վրա վերցնելով կարկառոր զբաղման 2/5-ը: Սակայն այդ էլ դեռ բաւական չէ: Հարկաւոր է ևս 2/5, որովհետև իրանը գեր-

մանացիները միայն 1/5-ն են վերցնում: Այդ պակասորդը լրացնելու համար դեռ չափ առաջ դիմում էր արված Ռուսաստանին, բայց վերջինս բաց էր բաց մերձել էր Եւ ուրիշ կերպ չէր էլ կարող լինել, քանի որ Բաղղադի երկաթուղին ամենից շատ վնասներ Ռուսաստանին կարող է հասցնել, վնասներ թէ անտեսական և թէ ուղղակի անտեսական: Այդ երողութիւնն այնքան ակնհայտ է, որ նրա մասին բացառապէս կերպով չէլանել են նոյն իսկ գերմանացի հեղինակներ՝ Շնէյդեր *), Բօհրբախ **) և ուրիշները:

Դրանից յետոյ մնում էր մի միջոց—դիմել անգլիացիներին օգնութեանը: Եւ Գերմանիան այդպէս էլ արեց, առաջարկելով հետևել պայմանները.—1) Անգլիան Գերմանիայի հետ միասին աշխատելու է բարձրացնել Քիւրբիայի մաքսային սակադիրը, որպէսզի զբաղով եկամուտի նոր աղբիւր ստեղծել Բաղղադի երկաթուղու համար խոտաքցում ջրիմէտրային գաբանտիան ստանալու համար:

2) Անգլիան նախապէս պէտք է համաձայնի Բաղղադի երկաթուղու վարուցիւնը յանձնելու անգլիական փոստի փոխադրութիւնը դէպի Հնդկաստան, Չինաստան և Աւստրալիա: Այժմ այդ գործողութիւնը կատարում են «Peninsular and Oriental Steam Navigation Company» և «Orient Steam Navig. Comp.» ընկերութիւնները, որոնք դրա համար տարեկան մօտ 1,500,000 Ֆրանկ են ստանում:

Բաղղադի երկաթուղին կարող է հեշտացնել այդ փոխադրութիւնը, զգալի չափով կարճացնելով ճանապարհը: Օրինակ, անգլիական փոստը այժմ հասնում է Լօւդուից Բոմբէյ 15 օրով ընթացքում, այն-ինչ Բաղղադի գծով դրա համար բաւական է 11 օրը: Ահա հէնց այդ պատճառով Բաղղադի երկաթուղու ընկերութիւնն ուղղում է, որ Անգլիան հէնց այժմ մեանից աչքի առաջ ունենայ այդ առևտրութիւնը և նորից երկար տարիներով պայման չը կազմէ յիշեալ նաւային ընկերութիւնների հետ:

3) Գերմանական առևտրական երրորդ պայմանն այն է, որ Անգլիան օժտվելով Գերմանիային պարսկական ծովածոցում մի յարմարաւոր նաւահանգիստ չիւնելու—Վոլէյաում, իբրև Բաղղադի երկաթուղու վերջնական կէտ: Իսկպէս այս երեք պայմաններն էլ խոշոր գերմանութիւն չէին պահանջում Անգլիայից, այն-ինչ փոխադրել տալու էին հակապական ձեռնարկութեանը գերմանացիների հետ համապատասխան իրաւունքով մասնակցելու արտօնութիւն:

Չը նայելով այս բոլոր հանգամանքներին, անգլիական կառավարութիւնը բացասական պատասխան է տուել Գերմանիային, անշուշտ աւելի գերադաս համարելով բոլորովին այլ կերպ պաշտպանել իր անտեսական-քաղաքական շահերը և մտատու արեւելքում»:

Եւ այդ մերժումն այնքան մեծ հրճումնք է պատճառել Ռուսաց մասուլի մի որոշ մասին, որ նա առաջարկում է ֆրանսիացիներին մի ակը դաշնակից Ռուսաստանի հրժարվել իր բաժին մասնակցութիւնից, որպէսզի գերմանացիները բոլորովին միայնակ մնան և չը կարողանան իրականացնել Բաղղադի երկաթուղու նախագիծը:

Բայց միթէ գերմանացիներն այնքան անզօր են, այնքան անկարող, որ այդպէս հեշտութեամբ ձեռք վերցնեն տարիներով փայփայած ձրադիրը, ընդհանուր նախանձի առարկայ դարձած ձեռնարկութիւնից:

Դժուար է հաւատար: Ե. Ք.

ՆԱՄԱԿ ՊԱՐՍՅԱՍՏԱՆԻՑ

Էնդլի, ապրիլի 4-ին Անցան Մահալաւի սուգի գիշերները և արիւն թափելու ու մարմին յօշոտելու վերջին օրը: Յայտնի է, որ այդ ժամանակ ամեն մի ճշմարիտ մահմեդական, չիս պահադի, իր հոգա փրկութեան մասին է մտածում և այդ պատճառով նա յամուռ նահատակ խալիֆի ու նրա ընտանիքի զոհաբերութիւններ է անում ու ողբեր կատարում: Ձոհերը, որ խէրիաթ անունն ունեն, շաբաթը, թէյից և սուրճից բաղկացած, բաժանում են ողբ կատարողները և ֆրանսիական պարսիկը զբա հետ միասին չէ խնայում նաև իրան իրանը տանջալուների ենթարկելուց, մասնաւոր որ տիրող համազանգայն այդ օրը յօժարական մեծող մահմեդականը արքայութեան մէջ տեղ ունի, իսկ

*) S. Schneider: „Die deutsche Bagdadbahn.“
**) P. Bohrbach: „Die Bagdadbahn.“

միթէ չը մեռնէ, երկրիս վրա ամեն գործում անողութիւն կունենայ. ուխտած նպատակի համար նրա խէրիաթ բաժանելը ընդունելի է արբերի առաջ և զոհաբերող ստանում է դրա հատուցումը:

Մեզանում, հայերիս մէջ էլ, նոյն համոզումը դեբաիլտող տեղ է բռնում: Մեր ամբար իր ամբողջ էութեամբ իրան կախված է համարում արբերից և նրանց կամքից: Տգիւտութիւնն է, որ մտորեցնում և մոլեռանդ է դարձնում մարդուն, ազիտութիւնն է, որ նոյն իսկ կրօնափոխ է չիւնում, որովհետև խաբուսիկ յայտերը նրա ուղեղիցն են լինում և այդ ուղեղիցի մէջ է որոնում իր փրկութիւնը—յոնցանքի ջաւութիւնը Այդ ազիտութիւնն էլ երևան եկաւ հայերի մէջ այս նպատակ:

Ինչ մահաւայտի սուգի օրերին լուր տարածվեց և մինչև այժմ էլ ասվում ու խօսվում է, թէ երկու ընտանիք հայերից կրօնափոխ են եղել և ընդունել մահմեդականութիւն: Լուրը, ի հարկէ, ազդեցութիւն էր, սակայն չը կայ հետևանք առանց պատճառի. իսկ պատճառը, ինչպէս պարզվեց, այն էր, որ մի պարսիկ երեւան ծնվելուց յետոյ չէ ապրում, և ահա նրա կինը յուսահատված ջրիտանէական արբերից, դառնում է իր ինչորտեաներով դէպի մահմեդական օրերը: Մահաւայտի օրերին չարբաթ է բաժանում պարսիկ կուրծք ծեծող սգաւորներին, և ահա տարածվում է, թէ այդ կինը և իր ամուսին Քէդորտը և մի քանի ուրիշները ընդունել են մահմեդականութիւնը:

Մի բան, որ շատ զարմանալի է այստեղ—համարեա ոչ ոք ընթերցածութեամբ չէ պարագում, այդպիսի անարարութիւն և թրմութիւն այս աշխարհի համար կարծեք յատուկ է, մինչդեռ կարելի է գրեթէ վերցնել դպրոցի փոքրիկ գրադարանից և այն էլ ձրի, կարգաւ—զանազան տեղեր խմբել, դատողութիւններ տալ կարգաւորների մասին, և այդպէս, փոխանակ բարձրասանքների կուռել ազիտութեան դէմ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՆ

Քիւրբակուն հանրածանօթ կարգերը լուր ընտրելու ծառայում է հետեւեալ տեղեկութիւնը, որ «Times»-ի թղթակիցը հաղորդում է Սօֆիայից: «Մակեդոնիայի ընդհանուր վերադարձի Հիւլի փաշայի լիեւալը հետզհետէ գծուար է դառնում: Ամենաբարձր դիտարկութիւններ ունենալով հանդերձ, նա գործնականապէս զրկված է հնարաւորութիւնից իրագործել այն միջոցները, որ նա ինքն է յանձնարարում: Նրա ձեռները կապում են Կ. Պօլսից եկած հրամանները. բացի դրանից նա չըլուսապատված է լրտեսներով, որոնք զեկուցանում են իրիդ-ֆիուսի նրա ամեն մի գայլը Եւրօպական հիւպատոնների ընդհանուր վկայութեամբ, Հիւլի փաշայի—ազնիւ, քաղաքակրթութեան և գործունեայ վարչական մարդ էլ բայց ներկայ պայմաններում նրա պատճառը անհրաժեշտ է: Նրան օգնական են տուել մի սպայ, որ կարգում է բոլոր նրա նախակները և արտօնութիւն ունի, առանց նրա գիտութեան, ուղղակի հետազոտներ ուղարկել Կ. Պօլսի: Մի խօսքով, Մակեդոնիայում գործադրվում է նոյն սխառնք, որ գործադրվեց Կրէտէում, երբ մեծ պետութիւնները թէֆօրմներ պահանջեցին: Եւ հետևանքները կը լինեն, ի հարկէ, նոյնը, թէ՛ միայն մեծ պետութիւնները միահամուռ և լուրջ ազդեցութիւն գործչին դնի Բ. Դրան վրա»:

Բէլգրադում հրատարակվող «Ալբանիա» լրագիրը, որ պարսկական գաղթականների օրգանն է, մի ընդարձակ յօդուածով հերքում է բոլոր այն մեղադրանքները, որ եւրօպական մամուլը բարդում է արատացիներին վրա և Միտրովիցի արեւնահեղութեան ամբողջ յանցանքը գցում է թիւրքերի, թիւրքաց զօրքի և թիւրքաց կառավարութեան վրա... «Մուսուր ժողովրդական մասան, առում է լրագիրը, գրգռված օտար գործակալներից և խախտույթի Բ. Դրան անհեռառես զողաքական գործիչներից, ապտամբնց հրատարակված թէֆօրմների դէմ, և Միտրովիցում, Կասովայում արիւնը թափվեց: Բաժնոր անսիրտ քաղաքագետները զոհ քարձան հարեւրից աւելի թշուառ դաւախներ մեր թշուառագոյն Ալբանիայի, նրանց հետ միասին և ուսուց հզօր երկրի մի երիտասարդ, որ սիրում էր մեզ այլապիսիներիս, իբրև իր եղբայրներին և աշխատում էր բարի ուղղութեան ընդել նրանց: Լրագիրը ապա շարունակում է. «Մինչև որ եւրօպական մամուլը և եւրօպական քաղաքական գործիչները չը դադարեն թիւրքայի թի տակ գտնվող ազգերին մեղադրելու, փոխանակ մեղադրելու թիւրքաց ինչամութիւններին, անիշխանութիւնը այդ փութած պետութեան մէջ կը սաստկանայ, իսկ թի տակ գտնվող ազգերի վիճակը կը վատթարանայ: Այդ ճշմարտութեան վրա եւրօպական քաղաքականութեան իմաստուն և լուսաւոր ղեկավարները չը պէտք է փակեն իրանց աչքերը, եթէ նրանք չեն կամենում, որ թիւրքայի լծի տակ եղած ազգերը չառնեն նրանց այնքան, ինչքան արդէն նրանք առում են իրանց տանջողներին»:

—Ուկրաինից հաղորդում են «Vos. Zeitung» լրագիրն. «Բոլոր ուսուց հիւպատոնները Մակեդոնիայում տեղեկութիւն ստացան հետազոտվ Կ. Պօլսից, ուսուց դեսպանանից, իբր թէ Սօֆիայի բոլորա-մակեդոնական շրջաններում վճարված է սպանել ուսուց բոլոր հիւպատոններին Քիւրբիայում (!): Լրագրի աւելով, Ուկրաինի ուսուց հիւպատոնարանի ներկայացուցիչ Մեդելուսն պաշտօնապէս հաղորդել է այդ մասին Հիւլի փաշային»:

—Սուլթանի իրագրով Չատիկ տօների առիթով հեռակալ գումարներն են արվել հոգեւոր դաւանութեան պետերին. յունաց պատրիարքին—75,000 դրուչ, հայոց պատրիարքին—50,000 դրուչ, հայ-կաթօլիկ պատրիարքին—25,000 դրուչ, բողոքական էկզարխին—50,000 դրուչ և հրէից բաղունպետին—30,000 դրուչ: —Մարիւմաթ» թիւրքաց պալատական լրագիրը հաղորդում է, որ սուլթանի հրովարտակի համաձայն, էրզրումում կազմված է յատուկ յանձնաժողով, վարի նախադաւնութեամբ, ժանդարմիայի վերակազմութեան համար բաժնեւն ժանդարմիայի օրինակով Գրիստոնեաները հրաւիրվում են մտնել ժանդարմիայի մէջ:

ՄԵՍԿԻՆ ԶԵՆՈՒԳԻՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. Բարձրագոյն զօրանդէպը վերացված է: ԱՍԽԱՊԱՏ, Թէյչն գեաը դուրս եկաւ օտիւրից և չըլակաքը ողողեց: Երկաթուղային շինութիւնները, նոյնպէս և տափարակ տեղեւրում գտնված շէնքերը ջրի տակ են: Կնայքները երթեկուցութիւնը դադարել է: Չեղեղ այնպիսի սաստկութեամբ եկաւ, որ հում աղբիւց շինուած շէնքերը փուլ եկան և ընտկիչները հազիւ կարողացան ազատուել: Վնասները ահապէս են Չուրը աւելանում է: ՄԱԴԻՒՆ. Կառավարութիւնը լուր չէ ստացել թեկնածուի մահվան մասին: ՀՈՍՄ. Արտաքին գործերի մինիստրը այսօր այցելեց Բիւլոյին: Թագաւորը հրամայեց իր պատկերը յանձնել Բիւլոյին:

ՉԻԼԻԲԵՐԳ. ՎԻԵՆՆԱՅԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԸ ՀԱՊՈՐՈՒՄ ԵՆ, ԹԼ ՈՒԿՐԱԻՆԻ ՍՈՒ ԿԱՅԱՆԱՆՈՐՎԱԾ ԵՆ ԵՐԿՈՒ ԲՈՂԱՐ ՈՒՍՈՒՅԻՆԵՐ ԵՄ ԶՊՆԱՆԱՅ, ՈՐՈՆՔ ԿՈՎՈՒՄ ԷՒՆ ԳՈՐԵՒ ԴՔՄՈՒ ԿԱՅԱՆԱՆՈՐՎԱԾ ԵՆ ԲՈՂԱՐ ՊԱՆՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԺԱՊԱԾ ԷՒՆ ԻԲՐԵՒ ՄՈՂԱՆԵՐ ԵՒ ԹԻՒՐԵԱԿԱՆ ՕՓԻԿԵՐՆԵՐ 12 ԲԱՍՏԱՅԻՍ ԳՈՐԵ ՈՒՂԱՐԿԵՆ ԴԻՍԿՈՒՍ:

ՍՈՅՈՒՆ. Մատկանութիւնը այսուրեւ կերպով հսկում է մակեդոնացիների գաղտնի գործունէութեան վրա, և Սօֆիայից ոչ հեռու, Դուքնիցայի մօտ, բռնեց երկու սայլ նրացաններով, բիւլոյներով և փամփուռներով: Գաբրիել-Պարչեվի մօտ տեղի ունեցած կռուի մէջ մակեդոնացիներից սպանված են պորսիկ Սուգարով, պորպորուչիկ Մեդել և վոյեվոզա Սօֆրոնիկ Ստոյանով: Կռուի ժամանակ թիւրքերի կողմից, իբրև զիտողներ, ներկայ էին գերմանական օֆիցերներ:

ՐՈՍՍՈՒ ԳՈՒՆԻ ՎՐԱ. Ապրիլի 24-ին Տագանբոլի նահանգական դատարանի ջրէական բաժնաժամուռքի մէջ սկսեց ջնջվել մի հետաքրքրաշարժ գործ, որի մէջ Մարիա Իլիչովը և ուրիշները մեղադրվում են զիտաւորեալ անդամաւնասութեան մէջ՝ ապականողական արէմիս ստանալու նպատակով:

Կ. ՊՈԼՍԻ. Ապտամբների պարագլուխը, Յոնչիկ, սպանված է: Սարոնիկում բոլոր դրպրոցները փակված են: Ուսումնասպետները և տեսուչները կայանաւորված են: Ուրիշ տեղեւրում կայանաւորված են ջազմաթիւ բողոք ուսուցիչները: Բողոքական ղեկավարական գործակալը երկու անգամ գանգատ յայտնեց Բ. Դրան՝ ոտտկանութեան բռնած ընթացքի դէմ:

ԼՈՒՐՈՒ. Բայ է թողնված Տրանսկական փոխառութիւնը: Ստորագրված են երեսուն միլիօն ֆունտ ստերլինգի Այն լուրը, թէ այն նանը թագաւորը այցելու է Բերլին և Վիեննա, պէտք է վաղաժամ համարվի:

Կ. ՊՈԼՍԻ. Մօնաստիբեան լիւլայթիւում, Կրապեչտ գիւղի մօտ կրի ծաղեց բողոքաների հետ: Առաջնորդը և հինգ հոգի հրատակամբից սպանված են: Եւրօպական վիլայէթներում շարունակվում են ձեռքաւարութիւնները և խուզարկութիւնները: Անարդար է այն մեղադրանքը, իբր թէ ոտտկանական պաշտօնեաները ձեռքաւարութիւններ են անում այն նպատակով, որ փող կորչեն հարուստ քաղաքացիներին:

ԽՍԱՅԱ ՄԷԼԻԳ-ԱՊՍԱՍԱՆ

